

- եւ զայն որպէս Սօթինու. եւ սիրեալ ընդ գե-
տոյն մերկացաք եւ անկաք ի ջուրն, որք լօղ
զիրտէաք. իսկ այլք կալեալ զծայրից ծառոցն
35 եւ յեղերս լուացեալք. եւ այլք պարան կա-
պեալ միջովք. եւ ծերք թասով ջուր առեալ եւ
զլուխս լուացեալ. բայց երկու հոգի տարաւ
զետն վասն արագութեան եւ հողոյն տղմու-
թեան :
- 40 Եւ փութացուցանէր զմեզ պարոնն վասն
ԱսիԱրապնուն, զի մի ասպատակեսցեն զմեզ.
եւ զի մի արեգակն բարձրացի եւ ցօղն տապէ :
Զի թէպէտ ամենայն արսպ գող է եւ աւա-
ղակ, բայց Ասին հէմ թալնէ, հէմ դերեցնէ :
45 Զոր անտի մէկ օրն հասաք ի ձորամէջ մի,
որ երկու կողմանց լեռոն էր. եւ միջովն նեղ
ճանապարհ : Եւ ի գլուխ անցից եհար պարոնն
զխորանն, որ ունէր ԲՃ ձիաւոր, հարահով
եասախով. զի առանց պարոնի ո՞վ կ'իշխէր
50 քաղքէն գուրս գնալ : Անդ սկսան ժողվել զա-
Փար՝ մարդագլուխ երկու զուռուշ ու կէս.
ով որ ունէր՝ փութով ետուր եւ զերծաւ. եւ
ով չունէր՝ ծեծէին, վիրաւորէին. այլ եւ վա՛ր
առեալ՝ Մ. Կ. չարբազ զարնէին տապանն.
55 վա՛յ զիս : Եւ օրն սկսաւ տարածամել եւ մար-
դիկն ի չողոյն թալկացեալք լինէին. եւ փախ-
չելոյ ճար չկայր. զի յամենայն կողմանց անցս
ճանապարհին կալեալ էին : Ապա քահանայք
եւ տօրթաթաւորք մէջ մտան, բարեխօս եղեն
60 պարոնին վասն աղքատաց եւ չբաւորաց, որ